ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Արարատ, 060-88-55-55, ararat.municipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 մայիսի 2026 թվականի N 0475-Ա

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 619-րդ հոդվածի պահանջներով,հիմք ընդունելով 2026 թվականի ապրիլի 16-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 2183 վկայագիրը, 2009 թվականի հուլիսի 02-ին կնքված թիվ 1169 գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասը վարձակալության հանձնալու պայմանագիրը և 2019 թվականի հուլիսի 26-ին կնքված թիվ 2810 համաձայնագիրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 01082019-03-0025, N 01082019-03-088, N 01082019-03-0059, N 01082019-03-001 և N 01082019-03-0064 վկայականները և հաշվի առնելով Ժանետա Անդրանիկի Ավանեսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Կատարել փոփոխություն 2009 թվականի հուլիսի 02-ին կնքված թիվ 1169 գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասը վարձակալության հանձնալու պայմանագրում և պայմանագրի կողմ ճանաչել Պավլուշա Սերգեյի Ավանեսյանի ժառանգ՝ Ժանետա Անդրանիկի Ավանեսյանին:

2.Կնքել համաձայնագիր Ժանետա Անդրանիկի Ավանեսյանի հետ՝ 2009 թվականի հուլիսի 02-ին կնքված թիվ 1169 գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասը վարձակալության հանձնալու պայմանագրի մյուս պայմանները թողնելով անփոփոխ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

08 մայիսի 2026 թ.
ք. Արարատ